Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 4-ին Հայ Առաքելական Եկեղեցին տոնում էր Հայաստանում քրիստոնեության առաջին ուսուցիչների՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Որպես քարոզչության խորհրդի ոգեկոչում, արդեն հինգերորդ տարին է, ինչ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի հատուկ պատգամով սբ. առաքյալների տոնը հռչակված է նաև քրիստոնեական դաստիարակության օր:

Այդ օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ի հիշատակ հայոց առաջին լուսավորիչների, մատուցվեց Ս. Պատարագ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տոնակատարությունը շարունակվեց Էջմիածնի մշակույթի տանը, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցչի վկայական հանձնվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի երկամյա դասընթացներն ավարտած 228 ուսուցչի:

Արագածոտնի թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, որ չորս տարի շարունակ ղեկավարում էր ՔՌՔԿ-ի աշխատանքները, կարևորելով քրիստոնեական դաստիարակությունը, նշեց, որ կենտրոնի կարևորագույն նպատակներից մեկը կրոնի ուսուցիչների պատրաստումն է: Ինչպես տեղեկացրեց Հոգեշնորհ Հայրը, վերջին հինգ տարիների ընթացքում կրոն դասավանդող ուսուցիչների երկամյա դասընթացներ են կազմակերպվել Արարատյան Հայրապետական, Արմավիրի, Արագածոտնի, Գուգարաց և Սյունյաց թեմերի 11 քաղաքներում: Երկու տարի առաջ կրոն դասավանդող ուսուցչի որակավորում է ստացել ևս 335 ունկնդիր: Այսօր կրոնի ուսուցիչները դասավանդում են Հայաստանի շուրջ 50 կիրակնօրյա և հարյուրից ավելի հանրակրթական դպրոցներում:

Գոհունակությամբ նշելով, որ կրոն առարկան պետականորեն արդեն ընդգրկված է Արցախի և Քաշաթաղի շրջանի հանրակրթական դպրոցների ծրագրում, Հայր Վազգենը բացառիկ իրադարձություն համարեց Արցախի թեմի Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում վերջին երկու տարիներին կազմակերպված կրոնի շուրջ 180 ուսուցիչների պատրաստման ուսումնական

հավաքները, ինչի արդյունքում Արցախի 150 և Քաշաթաղի 30 դպրոցներ ապահովվեցին կրոնի ուսուցիչներով:

Իր օրհնության խոսքն ուղղելով հանդիսությանը ներկա մանկավարժներին, Վեհափառ Հայրապետը բարի առաքելություն մաղթեց նրանց՝ նշելով, որ նրանք են այսօր առաքյալների գործի ժառանգորդը: «Մենք հավատում ենք, որ ձեր առաքելությունը պետք է պսակվի հաջողությամբ, որ անաղարտ մնա մեր հավատքը, որ ոչ ոք չկարողանա սասանել հիմքերը մեր հավատքի»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հանդիսության ընթացքում բանախոսությամբ հանդես եկավ և ուսուցիչներին իր բարեմաղթանքը հայտնեց նաև Երևանի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Գերշ. Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Իսկ յուրտ դահլիճի սառնությունն իրենց գեղեցիկ գեղարվեստական հայտագրով ջերմացրին ՔՈՔԿ-ի մանկական երգչախումբն ու ջութակահարների կամերային համույթը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ